Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգիրք») 1262-րդ հոդվածի 1-ին մասի փոփոխությունը պայմանավորված է երկքաղաքացիության վերաբերյալ պետության որդեգրած քաղաքականությամբ: Նշված հոդվածն Օրենսգրքի ընդունման պահից (1998 թվականից) ի վեր որևէ փոփոխության չի ենթարկվել: Պատճառն այն է, որ Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրությունն արգելում էր երկքաղաքացիությունը, իսկ այժմ նման սահմանադրական արգելք չկա: Ավելին, Հայաստանի Հանրապետությունում ընդունվել է երկքաղաքացիությունը կարգավորող օրենսդրություն:

Սույն փոփոխությունն անհրաժեշտ էր կատարել 2005-ի սահմանադրական փոփոխություններից[1] անմիջապես հետո, որպեսզի սինխրոնիզացվեին քաղաքացիական օրենսդրության և սահմանադրավարչաիրավական կարգավորումների կողմից որդեգրված սկզբունքները:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու նկատմամբ պետական արդյունավետ պաշտպանություն ու հովանավորություն ապահովելու համար անհրաժեշտ է փոփոխություն կատարել քննարկվող հոդվածում:

Բնակչության հոսունություն ունեցող պետություններում և հատկապես՝ Հայաստանի Հանրապետությունում, ազգային իրավունքի առաջնահերթությունը պետք է արտահայտված և ընդգծված լինի ամբողջ օրենսդրության մեջ, ինչը նաև ապահովում է իրավունքի դաստիարակչական գործառույթի իրականացումը:

Այս մոտեցումը որդեգրված է երկքաղաքացիության ինստիտուտը կիրառող, զարգացած իրավունքի ավանդույթներ ունեցող շատ պետություններում, որոնք արժևորում են սեփական քաղաքացիների նկատմամբ սեփական իրավունքի տարածման առաջնահերթությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1268-րդ հոդվածի 1-ին մասի փոփոխության անհրաժեշտությունը քերականական է: Ըստ դրա՝ *անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ չափահաս անձանց նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանվում և վերացվում է այն անձի անձնական օրենքով,* ***որի*** *կիրառմամբ սահմանվել կամ վերացվել է*

---

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780
30.1-ին հոդվածի վերջին պարբերություն

խնամակալությունը կամ հոգաբարձությունը: Այս նախադասության մեջ «***որի***» դերանունը փոխարինում է ոչ թե «***օրենքով***» բառին, այլ «***անձի***» բառին: Իսկ այդ դեպքում սխալ է *անձի կիրառմամբ* արտահայտությունը, քանի որ ոչ թե *անձն է կիրառվում,* այլ *ինչ-որ բան կիրառվում է անձի նկատմամբ:*

Ուստի անհրաժեշտ է նշված հոդվածում *«կիրառմամբ»* բառը փոխարինել *«նկատմամբ»* բառով: